ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1973 Թ. ՀՈՒԼԻՍԻ 11-Ի ՆԻՍՏԻՑ

Հուլիսի 11-ին, չորեքշաբթի.

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Ա. Նիստին հրավիրվել էր նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Վեհափառ Հայրապետը նիստից առաջ ողջույնի և բարի գալստյան ջերմ խոսք է ուղղում տ. Սիոն արքեպ. Մանուկյանին նրա՝ Մայր Աթոռ ս. Էջմիածին ժամանելու առիթով:

Վեհափառ Հայրապետի ողջույնից և բարի գալստյան խոսքերից հետո տ. Սիոն արքեպիսկոպոսը խոսք է առնում և հայտնում իր երախտագիտությունն ու շնորհակալությունը՝ Վեհափառ Հայրապետի հրավերի և իր նկատմամբ ունեցած վստահության համար:

Բ. Գերագույն հոգևոր խորհուրդն իր սույն նիստում, հարգելով Շիրակի թեմական խորհրդի, հոգևորականության ու ժողովրդի դիմումները, խնդրում է Վեհափառ Հայրապետին՝ տ. Նարեկ վրդ. Շաքարյանին ազատ կացուցանել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական պաշտոնից և վերահաստատել Շիրակի թեմի առաջնորդական տեղապահի իր նախկին պաշտոնի վրա:

Վեհափառ Հայրապետը Իր հավանությունն է տալիս սույն առաջադրանքին, հայտնելով նաև թե ցնոր տնօրինություն տ. Պարգև եպիսկ. Գևորգյանը անհրաժեշտ է որ մնա Մոսկվայում և շարունակի իր պաշտոնը, որպես առաջնորդ Ռուսաստանի թեմի և ներկայացուցիչը Հայոց Հայրապետի ռուսաց եկեղեցու պատրիարքության մոտ:

Գ. Գերագույն հոգևոր խորհուրդը զբաղվում է նաև Լոնդոնի հայ համայնքի հարցով, ծանոթանալով մի քանի նոր ստացված փաստաթղթերի:

1973 Թ. ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ՆԻՍՏԻՑ

Հուլիսի 15-ին, կիրակի.

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Ժողովին ներկա էին նաև տ. Սիոն արքեպ. Մանուկյանը և ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

Ա. Վեհափառ Հայրապետը, բացելով ժողովը, ողջունում է և բարի գալուստ մաղթում Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանին՝ Իր գոհունակությունն ու ջերմ գնահատությունը հայտնելով տ. Տիրայր սրբազանի շուրջ 13 տարիների եռանդուն առաջնորդական պաշտոնավարության մասին:

Ապա Վեհափառ Հայրապետից հետո խոսք է առնում տ. Տիրայր եպիսկոպոսը, որդիական իր երախտագիտությունն ու սրտագին շնորհակալությունը հայտնում Հայոց Հայրապետին՝ Մայր Աթոռ կրկին այցելելու հրավերի համար, և այնուհետև հանգամանորեն խոսում է վերջերս Եգիպտոս, Իրաք, ԱՄՆ ու Կանադա կատարած իր հովվական այցելությանց արդյունքների մասին՝ հրավերովը տեղի թեմական առաջնորդների:

Գերագույն հոգևոր խորհուրդը, լսելով Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանի բանավոր բովանդակալից զեկուցումը, իր գոհունակությունն է արձանագրում այս առթիվ՝ մաղթելով նրան նորանոր հաջողություններ իր հետագա գործունեության մեջ:

Բ. Այնուհետև Գերագույն հոգևոր խորհուրդը զբաղվում է օրակարգի վրա եղած այլ հարցերի քննությամբ՝ ընդունելով համապատասխան որոշումներ:

1973 Թ. ՀՈՒԼԻՍԻ 19-Ի ՆԻՍՏԻՑ

Հուլիսի 19-ին, հինգշաբթի.

Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Ա. Սույն նիստին հրավիրվել էին նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Սիոն արքեպ. Մանուկյանն ու տ. Պսակ արքեպ. Թումայանը և Տիրայր եպս. Մարտիկյանը:

Վեհափառ Հայրապետը նիստից առաջ ողջույնի և բարի գալստյան ջերմ խոսք է ուղղում տ. Պսակ արքեպիսկոպոսին՝ Մայր Աթոռ ժամանելու առիթով:

Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքից հետո տ. Պսակ արքեպիսկոպոսը խոսք առնելով իր երախտագիտությունն է շնորհակալությունն է հայտնում Հայոց Հայրապետի հրավերի համար Մայր Աթոռ կրկին այցելելու երջանիկ առիթով:

Բ. Այնուհետև Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է հայտնել, որ Ինքը հուլիսի 12—18 օրերին, քննելով Լոնդոնի հայ համայնքի ծոցում ստեղծված կացությունը, լսելով հայրապետական պատվիրակ տ. Պսակ արքեպիսկոպոսի բացատրությունները և ապա ծանոթանալով նրա բերած փաստաթղթերին և այնուհետև հանգամանորեն տեղեկանալով տ. Սիոն արքեպ. Մանուկյանի և տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի գլխավորությամբ այս առթիվ կազմված հանձնաժողովի եզրակացություններին, Ինքը որոշել է և հատենի ժողովին հայտնում է.

1. Տրված լինելով, որ Լոնդոնի համայնքի եկեղեցական-ազգային խորհրդի 15 անդամներ վերջին տարիների ընթացքում հրաժարվել են, և համայնքային կազմակերպությունը մնացել է առանց օրինավոր ղեկավար մարմինների, Վեհափառ Հայրապետը նշանակել է լոնդոնաբնակ ինն ազգայիններից բաղկացած առժամյա մի մարմին, որի գլխավոր պարտականությունը պետք է լինի առաջիկա վեց ամիսներին և, առավելագույնը, մեկ տարվա ընթացքում կազմակերպել ժողովրդավարական սկզբունքների հիման վրա համայնքային ընտրություն եկեղեցական-ազգային մարմինների՝ համաձայն համայնքի ներկա կանոնադրության:

Մինչև նոր մարմինների ընտրությունները սույն առժամյա մարմինը կստանձնի հոգատարությունը եկեղեցական գործերի, հայրապետական պատվիրակի հոգևոր տեսչության ներքո:

2. Նորընտիր ազգային-եկեղեցական խորհրդի որոշումով ս. Պետրոս անգլիկան եկեղեցու հայ համայնքի հանձնման վերաբերյալ կորդեգրվի խնամակալության (Տրըստի) հարմարագույն մի դրություն ու կկազմվի համապատասխան մի կանոնադրություն (Տրրըստիտ), որը Վեհափառ Հայրապետի կողմից վավերացվելուց հետո կներկայացվի տեղի պետական իշխանությունների հաստատման և որի հիման վրա ապա կկատարվի ս. Պետրոս անգլիկան եկեղեցու օրինավոր փոխանցումը հայ համայնքին:

Մինչ այդ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը կխնդրի անգլիկան եկեղեցու բարձր իշխանություններին, որ ս. Պետրոս անգլիկան եկեղեցին տրամադրվի հայ համայնքին՝ հայրապետական պատվիրակի հոգևոր վերահսկողության ներքո, առանց օրինական փոխանցման ձևակերպումների, մինչև նոր խնամակալության (Տրրըստի) վավերացումը Ամենայն Հայոց Հայրապետի կողմից:

Այս առթիվ խոսք առնելով տ. Պսակ արք.-ը ժողովին հայտնում է իր մտավախությունները և լուսաբանությունները, ապա իր խոստումը որ որպես հայրապետական պատվիրակ պիտի աշխատի վերոհիշյալ որոշումների համապատասխան:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում ուրախությամբ են արձանագրվում Վեհափառ Հայրապետի սույն որոշումներն ու կարգադրությունները Լոնդոնի համայնքային կյանքի վերակազմության ի խնդիր: